ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 23.05.2018թ. ԹԻՎ 383-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

06 հունիսի 2018
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ
Գևորգ Սիմոնյան Տեխնիկական ապահովման տնօրեն
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Լյովա Սարգսյան Դիտարկման ծառայության պետ
Արսեն Կարապետյան Ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի ղեկավար
Հանձնաժողովի բացող անդամներ
Տիգրան Ղուկասյան Ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի առաջատար ինժեներ
Էլմիրա Զախոյան Դիտարկման ծառայության ինժեներ
Հանձնաժողովի քարտուղար
Անահիտ Կարապետյան քարտուղար

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-05/18 ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը

1. <<Երևանի Կապի միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ

Հանձնաժողովի նախագահ Գ. Սիմոնյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք առարկայի գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Հրապարակվեց մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:

Չափ. հ/հ	Գնման առարկայի անվանում	<<Երևանի Կապի միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ	Նախահ. Գին ՀՀ դրամ
1	<<ՄՌԼԱԱ ռադարի ալեհավաքի հենապտուտակային սարքավորման վերանորոգման>> աշխատանքներ	30 000 000	30 000 000

Հանձնաժողովը որոշեց

1. Բավարար գնահատել <<Երևանի Կապի միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:
2. Սույն ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Երևանի Կապի միջոցների ԳՀԻ>> ՓԲԸ-ին:
3. համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝
   - հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 18.06.2018թ. ժամը 11.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Գ. Սիմոնյան	**Հանձնաժողովի նախագահ**
Լ. Սարգսյան	**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան	**Հանձնաժողովի անդամ**
Տ. Ղուկասյան	**Հանձնաժողովի անդամ**
Է. Զախոյան	**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան	**Հանձնաժողովի քարտուղար**